

ՀԱՉԱԿ

15 Յուլիսի Ա. Պօլսի մեծ ու արխանհեղ Յոյցի ժամանակ տաճիկ բռնապետի զօրքերով նա-
հատակիցս, դառնալով զոհ աղատութեան, Հըն-
չակեան կուսակցութեան անդամներից գործունեաց,
անձնուրաց ու բաջ կԷՄԱԼՄԱԶ ՄԱՆՈՒԿԻ՝ բա-
ղէցի, ԶՐՀԱՆԿԻՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԻՍԻ՝ սերաստացի
և ՆԱԶԱՐԷԹԻ՝ վանեցի:

ԿՈՏՈՐՈՒՄ ԵՆ...

Եղբայրներ, եղբայրներ, այս ինչ է... կոտորում,
մորթում, սպանում են հայ ժողովրդին Հայաստանում...
կրակում, հրդեհում, թալանում են նրա տներն ու
կայքերը... մեր մայր հողը կուտակում են իր հա-
րադատ զուտակների բազմաթիւ գիւղերում... նրանց
արխանով առողջում հայկական դաշտն ու քաղաքները...
Մինչև երբ...

Հայաստանը զարծել է արխանհեղ կոտորումների
առաքելը... Փլուխը կորցրած կառավարութիւնը, որ
հայ ժողովրդի շրթներով անխժված ու նզովված է, իր
զօրքերի ոյժն է փորձում հայերի վրայ և ամեն մի
քայլափոխում, որպէս անյաղ վամպիր, նրա արիւնը
խմում...

Կոտորում կոտորման ետևից միմեանց յաջորդում են
Հայաստանի քաղաքներում վան, կարին, Մուշ և մի
շարք գիւղեր արխանհեղ անցքերի գաղտնախորհն են դար-
ձել թիւրքական բազմաթիւ զօրքերը, Հայաստանը ոտի
տակ արած, կատաղի արշաւանք են մղել ընդդէմ հայերի
Այսօր այդ թշուառ երկիրը պատերազմական դրութեան
մէջ է: Կոտորում են, կոտորում են հայ ժողովրդին, որը
յուսահատութեան մոլեգին մանչիւնով է պատերազմում
թիւրք կառավարութեան այդ վայրենի, այդ բարբարոս,
այդ արխանաճարաւ ընթացքին:

Եւ միթէ այդ բոլորը մենք կժաժկենք սառնա
սիրտ լուծութեամբ — այդ սարսափելի ու վայրագ
կոտորումները:

Եւ միթէ ամեն մի հայ, որի երակնիւրում զեռ
հոտում է տաք արիւն, որի մէջ կայ եռանդ, կենդա-
նութիւն, որը տէր է այնպիսի զգացումների, որոնք
գիտեն և՛ արցունք հոսեցնել և՛ արդար զայրոյթ
ծագեցնել — այսուհետեւ զեռ կմտածէ թէ ինչ գործի
գիմել, թէ որպէս ծառայել իր հարազատ ժողովրդին,
թէ կհանքի ինչ նշանաբան ընտրել:

Եթէ այդպիսի հայերը չարունակեն այսուհետեւ
էլ լսել — արդեօք այդ լուծիւնը յայտարար չի՛ լինիլ
նրանց վախի, նրանց փորրոգի սառնասրտութեան և կամ
նրանց ծայրայեղ բթամտութեան, որ արգելում է նրանց
տեսնել ահալի իրականութիւնը և գիտնալ որովհէ-
տեւ հրամայ գործունէութիւնն ազգային այժմեա հան-
գամանքներում:

Ա. Պօլսի 15 յուլիսի անմոռանալի մեծ Յոյցը,
հայ յղափոխութեան այդ առաջին քայլը, սուրբ պա-
տերազմի այդ առաջին հնչիւն կոչնակը ցոյց տվեց,
որ հայերի մէջ կան մարդիկ, կան յղափոխականներ,
կայ կազմակերպված յղափոխական Կուսակցութիւն,
որ կարող են, որ ուզում են, որ գիտեն գործել
և որ գործում են արդէն:

Այդ նշանաւոր երկոյթի ներկայութեամբ ինչ է
մնում անել գործից տակաւին զուրս գտնվող և
ոսանդուն ու մտածող հայերին, եթէ ոչ ձեռք կար-
կառել այդ Կուսակցութեան, միանալ նրա հետ և
կազմակերպված, նրա հետ միասին գործել հանուր
հայութեան ազատութեան ու բարօրութեան համար:

Եւ միթէ այս ու հետեւ էլ այդ հայերն զա չեն
անիլ...

Պո՛ւ, չնչի՛ն միացորդ անցեալ մեծութեան, ո՛վ ժա-
մանակակից հայ ինտէլիգէնտ, որ գործից զուրս ես
զեռ, տե՛ս, թէ մինչ այդ աստիճան ստրկութեան ու
բռնութեան ենթակայ եղի՞լ է երբ և է հայն ու իր հայ-
րենիքը... Ա՛նժ... հայ ժողովուրդը կուտում ու կոտոր-
վում է առանց քեզ, քե՛զ, որ կոչումի՞ք էր լինիլ նրա
ստաճորդ... նա կուտում է մենակ, և նա կոտորվում է,
փայտայելով ապագայ յաղթութեան ջերմ յոյժը:

Հայաստանի այդ նոր արխանհեղութիւններն արձա-

զանգ են Կ. Պոլսի մեծ ու արխանալից Ֆոյցի, որով նոյն իսկ տաճիկ բանապետի քթի տակից նշան տրվեցաւ. առ ըողջ Հայութեան: Երկրի ներսն այժմ առաջացել է յեղափոխական դրութիւն: Մի մեծ յաղթութիւն, որով սլաւոնական ենք Կարինի գէպքին և զխառնութեամբ Կ. Պոլսի նախագծւած չարաման: Ժողովուրդն էլ սիրտ առած այդ գէպքերից, այսօր ընդհարուած է անդադար կառավարութեան զօրքերի հետ: Յուզում ու կատաղութիւն, ետանդ ու քաջութիւն — միանգամայն նրա ներկայ տրամադրութեան արտայայտիչներն են դարձել:

Եզրայրենէ՛ր, չը պիտի անգիտանալ այդ նշանաւոր փաստերը: Արդեօք այդ բոլորը նշանակ չէ՞, որ Հայ մարդը սկսել է մղել սուրբ մարտն ընդդէմ դարեւոր անասնկի բռնութեան և որ նա վերջապէս վճռել է թափել իր արիւնն այն բոլորի համար, ինչ արդար է, ինչ վսեմ է, ինչ սուրբ է:

Պէտք է միանալ այդ խրոխտ ու կենդանի ոյժերի հետ, որ արդէն գործում են: Պէտք է ամեն ծայրերից դրական կերպով պատասխանել այդ գործիչների բարձր հրաւերին, որ նրանք ուղղում են ամբողջ Հայութեան, արիւննոտած շրթնով ու կրծքով: Պէտք է արիասիրտ, յանդուգն ու վսեմ կատաղութեամբ շարունակել միանգամ յայտարարված մարտն ընդդէմ վայրենի, արիւնասիրտ, աւաղակ կտոափարութեան, որ վճռել է կոտորել, խողխողել մեզ, որպէս զի ինքը փրկվել իր անխուսափելի անկումից:

Եզրայրենէ՛ր, սեղմվե՛նք մեր կարգերում, կարգաւորենք մեր ոյժերը, մի և նոյն ծրագրի ու նպատակների խորհրդով և մի և նոյն կարմիր դրոշմ ծածանելով, մեր բազմաթիւ ու ոգեւորված ժողովրդային լէգէօններով կանգնենք մեր արիւնարբու, մղեղին, բայց և մեղից սարսափող թըշնամու դիմաց և այն քաղաքներն ու վայրերը, որ այսօր Հայի համար դարձել են գոծոք, թո՛ղ լինեն նրա զրախոք և այն բերդերը, ուր այսօր Հայն ամրապինդ չղթացված բանտարկված է, թո՛ղ զարգարվին Հայոց յաղթութեան դրօշով...

Տ Ա Ս Ն Ե Ի Հ Ի Ն Գ Յ Ո Ի Լ Ի Ս Ի Ն .

Իբրեւ Հայկական յեղափոխութեան նշանաւոր զօկու-մէնա (document) շտապում ենք տպագրել «Հնչակում» այն գրութիւնը, որ Ֆոյցը նախաձեռնող Հնչակեան կուսակցութեան կողմից արտասանվեցաւ 15 Յուլիսին Կ. Պոլսում: Այդ գրութեան խորագիրն է «Հայ ժողովրդի պաշանջները», որ պատրիարքարանի բաղում արտասանեց աղնիւ նահատակ Կէմալմագ Մանուկը հինգ հազար ցոյց

անող բազմութեան առջեւ, անդադար ընդմիջվելով բուն ծափահարութիւններով ու ողեւորված կեցցէներով: Այդ տառնարանութեան պատճէնը պատրիարքը պետք է ներկայացնէր Բ. Կրան:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .

«Հարազատ Ժողովուրդ .

«Մենք, հայերս, ունինք երկիր մը, հայրենիք մը, որուն մեր նախահայրերը մկրտել են Հայաստան անու-նով, որուն ալ օմիտ է դարձած թշուա՛ն ածականը: Քեզ քաջ ծանօթ է այդ երկիր, վասնզի դուն անգիլն ես ե-կած հոս, ուր կապրես պանդուխտ: Այդ երկրին անաւ-տական, հասարակական և քաղաքական միճակն հիմայ կամ արիւն, կամ արցունք կհոսեցնէ ամեն մէկ Հայուն որտէն: Անտանկի հարստահարութիւնք, անիրաւ ձեռ-րահարումներ, ապօրէն գաղտնադատութիւնք ու անխիղճ քրտորանք այնտեղ անպակաս են: Սոյնպիսի արարքներու դէմ ժողովրդի բողբոջ արդար ծայրը անխելի կը մնայ միշտ և մինչև իսկ կատաղի զօրքերով անխնայ կը կո-տորուի, սուխնահար ու գնտակահար կիյնայ նա, ինչպէս Վանայ, Մշոյ, այլ տեղերու և վերջերս Կարնոյ մեծ գէպքին մէջ: Մեր հաղարուոր փիմոյ քոյրերու ազապա-կը և մեր նահատակվող եզրայրենիքու տակաւին տաք արիւնը մինչ այժմ անուշադիր մնացած է, — ի՛նչ կը-սեմ, — արհամարհված ու ծաղրված է իսկ: Զուրկ ամեն տեսակ իրաւունքներէ, ծանրաբեռնաւ սարսափելի հարկերով, անխիղճ հարստահարուած պաշտօնեանէ, վաշխատուէն, մուլթէղիմէն և այլն, զուրկ նաև ինքնա-պաշտպանութեան իրաւունքէ և անպաշտպան կանգնած դէմ տու դէմ թշնամու հրացանի ու սուխնի, զուրկ Հայ կարիւր գանակէն անգամ, — հայերս կքայքայուինք, կը կորսուինք. ժողովն՛րդ, դու պիտի կորսուիս, դու պիտի վերանաս, եթէ քո միճակը նոյնութեամբ տեէ: Պատաւ հաց մը, քիչ մը սե զլզլը որ հարստահարիլեն, հարկեր ժողովիլեն հաքը կը մնայ քովդ, այն ալ քուկդ չէ. զին-եալքը կուգան, կզարնեն զլիւրդ, կայրեն տունդ, կան-պատուեն կինդ և լաջիդ բերնէն կիւլեն պատաւ հացն ալ սե զլզլին տը: Ի՛նչ ես դուն այսօր քո հայրենիքին մէջ... Սնատուն մը: Կաթնոտու կովը, ապուշ ոչխարն անգամ քեզմէ աւելի գնահատուած են: Ի՛նչ ես դուն այսօր այս չապլ մայրաքաղաքիս մէջ: Ողորմելի պանդուխտ մը, անտէր անտիրական աշխատաւոր մը, որ երկու ձեռքե-րէդ ուրիշ բան մը չունիս քեզ սեփական: Բայց այդ երկու ձեռքերդ ալ մեծերն ու հարուստներն անգութ կերպով կաշխատուցենն, կըամեն քո մարմնիդ բոլոր ոյժը և այնուհետեւ որո՛ւն հող, որ տկար ու անգործ մնացած, աղքատութեան սե օրերդ քարչ կուտաս, մահիդ համար ա՛րա քաշելով, իբր ցանկալի բաղդի մը համար: Մինչդեռ տառնեակ հազարներով դուն այստեղ և այլ տեղերք մեծ-երու, — քո քրտինքով, քո աշխատանքով, քո արիւնով ապրող այդ զաղաններու, — անլեզու գործիք մ'ես դար-

ձած, Հայաստանի մէջ քո որ քննանքիդ վայրենի կամաց խաղալիք դարձած, իր ծնած օրը կանխէ և աչքը ճան. րին յառած արցունք կը կարէ: Ժողովուրդ, այս ի՞նչ է, սա տարե՞ր կնշանակէ, սա գոյութիւն մ'է, քո անուն զեռ մա՞րդ է... Տե՛ս. այն չքեղ հարուստ, փթխարի սլաւա. ներուն մէջ ապրող անբան մեծամեծները քո աշխատան. քով կըստնին. զո՛ւն ես անոնց աննդատուն, դուն ես անոնց կերակրողը: Արդարութիւն է այդ: Մեծամեծները քո վաստակդ կը չտային զարգարուն հարեմներու վրայ, ուր քո կուսանք բանտարկուած են, իսկ դուն ու զորմիլի, ազբատ, օրուան հացի կարօտ մուրացկան մ'ես դարձած: Երազիդ մէջ իսկ տեսած ես արդեօք այդպիսի աղետալի փիճակ մը...

Ժողովուրդ,

Քո անթիւ, անհամար թշուառութիւններու բուն պատճառը, խեղճան արևատը քո փաթիկ բողբոջած ըլլալն է. կուզեմ տեսլ թէ՛ քո անտեսական անանկացեալ և քայքայուած փիճակն է: Հայրենիքիդ հողը քուկդ չէ՛ աւ. մննիկն: Գուն կըմարեա, կըցանեա, ոչխարներու հօտեր կարածացնեն կալուածատէր հարուստներու, բէշերու, տէրութեան հողերը, որոնց համար կ'իճարես ահագին տուրքեր, որով իրաւունք կառնես մշակելու: Բայց կ'իճա. կես, չարատանջ կաշխատիս և առած արդիւնքն ալ կրկին քուկդ չէ և ո՛չ հարկւրին հինգն անգամ: Քո անտեսա. կան դրութիւնդ է, որ յեղափոխուելու անհրաժեշտ է: Տնտեսական կացութեանդ և անտեսական յարաբերու. թիւններն երկրին մէջ պիտի կատարելապէս կերպարանա. փոխուին և կանոնաւորուին քո սահմաններուն համեմատ:

Որո՞նք են քո սահմաններդ:

Գուն կուզես, որ հողը հաւասարապէս պատկանելի ըլլայ այն ամենուն, որք կ'իճակեն զայն:

Գուն կուզես, որ այդ հողէն առած արդիւնքն ալ պատկանէ անոնց, որք կարտաբերեն զայն:

Գուն կուզես, որ այդ սկզբունքին համեմատ ամեն մարդ աշխատանք գործ գնէ և հողը մշակէ, բանի, որուն զօրութեամբ ալ ամեն մարդ աշխատաւոր պիտի ըլլայ իր տարրուստն հայթայթելու համար:

Գուն կուզես մի խօսքով, որ անտեսական ամեն հարստութիւն միշտ հաւասարապէս սահմանված ըլլայ ժողովրդին ամեն անդամներու մէջ:

Բայց կրնան արդեօք քո այդ անտեսական սահմանն. րըն իրագործել, երբ դուն ստրուկ ես, երբ դուն քո ճա. կատաղրին տէրը չես, երբ դուն հայրենիք չունիս: Զա. կատաղրիդ տէրը դուն ինքդ պիտի ըլլաս, հայրենիքիդ տէրը դուն ինքդ պիտի ըլլաս, որպէս զի սահմանելով հարկ եղած հասարակական կարգն ու օրէնքները, կարե. նա անտեսական դրութիւնդ սահմաններուդ համեմատ աղատարար կարգադրել: Եւսի քո բաղաբական փիճակդ պիտի յեղափոխես, քո բաղաբական սահմաններդ ի կա. տար ածես, որպէս զի միջոց ունենաս քո անտեսական փիճակդ ալ բարելաւել:

Բաղաբականապէս դուն ինքդ պիտի ըլլաս քո ինքնա. վար տէրը: Պիտի ըլլայ Որէնսդիւր Ժողով մը, իբրեւ ժո.

ղովրդային ներկայացուցչութիւն, որոց անդամները կըն. տրուին ազատ կերպով ընդհանուր քուէարկութեամբ, առանց խտրութեան կրօնի, դասակարգի, պարտավունքի և կարողութեան: Այդ Որէնսդիւր Ժողովը պիտի ունենայ կատարեալ իրաւունք ազգ. կառավարչական բոլոր հար. ցերի մէջ: Հայաստանի նահանգները պիտի ունենան տեղական ընդարձակ ինքնաւարտութիւն: Պիտի ըլլայ նաեւ մամուլի, խօսքի, խղճի, գումարման, ընկերութիւն. ների և ընտրողութեան գործերի ազատութիւն: (1)

Ժողովուրդ,

Ահա՛ այն բաղաբական սկզբունք, որոց գործողութ. թիւն անյետաճգելի է փրկութեանդ համար և յանուն որոց այս Յոյցը կընես: Ո՛չ թէ կը խարուես, որ այդ ամենն ալ այսօր քեզ արտի, այլ դուն կուզես այսօրուան Յոյցով յայտարարել ի գիմաց սմբողջ աշխարհին՝ թէ որոնք են քո սահմաններ: Գուն քո՞ք գիտես, որ գիւրիւ. թեամբ չեն իրականար քո այդ սահմաններդ: Գու գիտես, որ կեանքդ վտանգի կենթարկես քո ամեն մէկ արդար քայլափոխին մէջ: Բայց ուրի՛ն անկիր չմնաց այլ ես. հօգիդ հասած բերանդ՝ դուն պարտաւորուած ես գիմելու ամեն ծայրայեղութեանց, որոնց միջոցով միմիայն կրնաս քո արդար ձայն լսեցնել տալ աշխարհին և քո արդար սահմանների նպատակին համար: Ահա՛ այս է մեր այսօրուան Յոյցին խորհարգը: Գիտանք մեր գ ո ո ը ը առաջ մղել և մեր դատը պաշտպանել նոյն իսկ ամենա. ծանր և ամենատուգ գնով... Կեցցէ՛ հայ ժողովուրդը, որոց միակ ազագոյնն այժմ պիտի ըլլայ՝ Աղատութիւն կամ մահ:

Թ Ղ Թ Ա Կ Յ Բ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ .

ՏԱՄՆԵԼԻՆԳ ՅՈՒԼԻՍ .

Ն, ո Ր մ ա ն բ ա մ ա ն ու թ իւ ն ն ե Ր .
(Սեփական թղթակցից)

19 Յուլիս 1890 Կ . Պօլիս .

Կշտապեմ Յուլիս 15 ի արեւմտահայ Յոյցի մանրամաս. նութիւններն հաղորդել Կ . Պօլսոյ մէջ տեղի ունեցած ազգ. զիտակցական յեղափոխական Յոյցի մասին որչափ մանրամասնութիւնք արձանագրուին կարծէ, ուստի կաշ. խատեմ կարելի եղածներն հաղորդել յաւելցնելով նախ. կին նամակիս: (2)

Առաջին անգամ մի երիտասարդ մօտեցաւ պատրիար. քին ներկայացնելով նորա մի յայտարարութիւն «Մեր սահմանը» վերնագրով և մի գրութիւն «Հայ ժողովրդի սահմանները» վերնագրով և խնդրեց որ ժողովրդեան զլուս անցնելով, սուլթանին ներկայանայ. նոյն միջոցին վանեցի Հաճի Արթիւնը, որ իբրեւ խմբագիր ձեռնադա. ված է, բեմ ելաւ և սկսաւ կարգաւ վերեւ յիշած «Մեր

- (1) Տես Հնչակեան Կուսակցութեան Ծրագիրը:
- (2) Տ . «Հնչակի» յաւելումը:

պահանջը՝ Տ. Սուքիաս քահանայն և այլք խեղճ նորա մօտն ելնելով ուղեցին արգելել, բայց ժողովրդին միտքն ունեցալով թէ «խղ կարգացուի» սարսափահար ըրաւ ամենքը։ Արգելադրեալ ժամանակ և պատրիարքը կողմնակի ճանապարհներով հաղիւ կրցաւ պատրիարքարան ապստամանի։ Մեծ էր ժողովրդի գոռումն ու գոչումը։ Խառնաշփոթ տեսարան կը ներկայացնէր եկեղեցւոյն ներսը։ Հազարաւոր բազմութիւն գիրար հրահանելով կա՛նապարէին դուռն ելնել։ Սրտայայտ էր մանաւանդ տե՛ս սարանը՝ Ներսէս պատրիարքի գերեզմանի մօտ, գաւթին մէջ։ Ժողովուրդը յազմած ու արտասառթոր կը գոռար՝ «Արթնցիւր, Ներսէս, և ուրախացիր տեսնելով ժողովուրդդ, որ իր փրկութեան համար մեռնելու կերթայ»։ Շատեր գրկած գերեզմանաքարը կը համբուրէին և ունեք փորձելով շարժել գերեզմանաքարը «ՆՆ Ներսէս, ե՛ւ» կը պոռային։ Այս միջոցին արդէն ժողովուրդը լցուած էր սուրբ ոգով պատրիարքարանը և փողոցները, և նոյն օրուայ առիթն զոհ փանեցի Մանուկը, հիսուն հիսունուհինգ տարեկան, պատկառելի զէմքով, բարձրացած պատրիարքարանի սանդուխաների վրայ, խրոխտ ձայնով, յառակ ու պարզ ժողովրդական լեզուով հայ ժողովրդի դուրսէնը նկարագրել սկսաւ և օրուան Յոյցի նպատակը հասկացուց, և որ արդէն ժողովրդին յայտարարուած էր առանձին թերթերով, և վերջացուց խօսքը «Ազատութիւն կամ մահ», գոչելով սրուն արձագանք տուաւ հազարաւոր բազմութիւն։ «Ազատութիւն կամ մահ»։ Միւս կողմէ եկեղեցւոյն բակին մէջ ուր նոյնպէս հազարաւոր ժողովուրդ մէջն ունեցաւ սերտառայի երկատարող Նազարէթը ելնելով Պեղծեան ամբարայի դամբարանի վրայ սկսաւ խօսել։ «Մենք պարզ աշխատաւորք, որ կ'աշխատենք մահով մարմնով գլխով ցերեկ քրտինք կը թափենք արտաւ մը սե հայ հայրենիքի մեր ընտանեաց, այսօր, ո՛հ ինչ կը լսենք, այսօր մեր կիներ, մեր գաւառներ, մեր հայրեր, մեր մայրեր թիւրքի հրացաններէ պայտնուց կը մեռնին և մենք այստեղ կիսամեռ կը շարժարուինք, աշխատելով մեր հարկերը տալ։ Մի մնաց մեզի, ի՛նչ մնաց մեզի, անտէր գլխով մը և կուրծք մը որ և, կըրարք, զէմ տանք մեր թշնամեաց, յանուն մեր ազատութեան»։ Այո՛, այո՛, «պիտի արտանք, պիտի կրկնենք անդադար ազատութիւն» և «թող լե՛ւ մօնջը, անդամաբո՛ւք, կամ արոց քաղցր է թշնամու լուծը, իսկ մենք որ աւնենք հոգի և սիրտ քա՛ն, եկ անվախ ելնենք թշնամու առաջ, զոնէ մեր փառքը մահով ետ խլենք ու այնպէս լուենք»։ Ոգևորուած բազմութիւնը յանկարծ փառուցաւ և խրոխտաբար լսուեցաւ նոյն երգի ոգելից եղանակը։ Զայնմեռ նոյն ոգեորեալ բազմութիւնը գնաց միանալով պատրիարքարանի մէջ կողոնկրու հետ, որտեք պատրիարքի ուշանալու վրայ անհամբեր ատրճանակներ կարճակէին և գոներն ու աղակիներն կը խորտակէին։ Վերջապէս երկցաւ պատրիարքը։ Իսկ զձ պատրիարք — զաղկապէս, գոռաւոր, բայց զիջած ժողովրդի արգար պահանջին։ Տեսնալով նորան ժողովուրդը սկսաւ յառաջանալ գոչելով «Պատրիարք, երթանք սուրբանին, մի փախնար, գնանք յառաջ» և ամբողջ աղաղակներով և գոռով գոչւումով սկսեց տանել պատրիարքին։

Ոստիկաններ ու զինուորներ փողոցի անկիւններէն երկիւղալի տկարներ միայն էր նկատելն ահաւոր բազմութեան վրայ, որ կը յառաջանայ։ Պատրիարքի գեղաւոր տանը ապարտանած ժամանակ ժողովրդի յազումը ոտատկացաւ։ Զինած ամբարքի մնաց քանդէր գեղաւորներ, եթէ Մամբրէ փարգապետ երկաթեայ դուռը

բանալով չպոտար նորան «Հանգստացէ՛ք, զեղ կառնէ պատրիարքը, խեղճ պիտի գայ և առաջնորդէ ձեզ»։ Ի լուր պատրիարքի տկարութեան անմիջապէս կառք մը բերուեցաւ և նստեցունելով պատրիարքին սկսան յառաջանալ։ Պատրիարքի հետ նստած էին Մամբրէ վրդ. և վանքի Հաճի Գարաթիւն, իսկ ձերբու սանձերէն և կառքի չորս կողմէն բռնած էր ժողովուրդը։ Աղկալի բացականչութեամբ դանդաղաբար կառքը սկսաւ շարժուիլ։ Արդէն Յոյցը սկսուել մէկ ժամ եղած էր և հեռագիրը Պոլսի ամեն կողմերէն զինուորներ կը համախմբէր իր Գում. Գափու. նոյն պահուն սուրբանի հրամանաւ Տէր. վրդ փաշա և մի քանի բարձրաստիճան մարմնի ընդ որս ոտտկանութեան նախարար Քեամիլ պէյ, Կ. Պոլսոյ կառավարիչ Արիֆի փաշայ, թեկնապա՛հ Ահմադ փաշա և Զիլէր պէյ եկած հասած էին Պալի փաշայ ըստած տեղը ուր յեղատիտական թափորը կը յառաջանայր։ Նոյն միջոցին սուրբանէն հեռագրական հրամաններ կը հասնէին, որ ամեն միջոց ի գործ գնելով ամբողջ ցրտեն ու Յոյցը զսպնէր Հազարաւոր զինուորներ, որք ամեն կողմէ հասած ու պաշարած էին բազմութիւնը, յանկարծ հրաման տալ ցան գնտակով ու սուրբան յարձակուել ժողովրդի վերայ։ Ահաւոր էր տեսարանը. զինուորացի կողմէ մարթնի հրացան և ժողովրդի սէվօլներն ու խանդանների հարուածներ սկսան ակամօ խլացունել ու աչք լրացնել։ Զէնք չունեցող անձի պաշտպանութեան համար քարերով զէմ կը գնէին զինուորների սուրբանի մ'առաջ, որ ինչպէս ըսինք մարթնի հրացաններով գնում էր, խառնաճաղանջ ժողովուրդը իւր խանչանքով, ընկճելներով և քարերով ալ շէր կարող գիմանար, ուստի տեղի կուտայր մէկ կողմէ և ուրիշ կողմէ աւելի ստատիկ կերպով կը յարձակէր։ Ահաւոր էր ծովի մը նմանութիւն ունէր. ժողովրդեան ալիքներ փրփրած կը զարնէին ու կը զարնուէին անմատչելի սաղաւմներու և ստիպւած ետ կը գտնուէին կրկին վերադառնալու համար։ Վերադառնալու օրով տան կը մնային, արևուն կը հոսէր ամեն կողմէ և ժողովուրդը գեւ չէր թողած պատրիարքի կառքի ձերբուն սանձը, կառքը շարունակել իւր ճանրան և իւր արիւնների ձեռքով, սուրբանով ծով ծով եղած պահանջից թուղթը ներկայացնել անգութ սուրբանին. կամ բաւականութիւն ստանալ և կամ նորա զահայից շուրջը իւր աչքերի տառջ կոտորիլը։ Նորանոր զինուորացի խմբեր վրայ հասնելով ամեն կողմէ արգելիցին ժողովրդեան ճանրան և անխնայ զարկելով սկսեցին ցրուել ժողովուրդը։ Այս միջոցին կռիւք տարածեցաւ։ Գում. Գափուի զանազան փողոցների մէջ, մէկ կողմ ժողովուրդը զինուորներ կը փախցնէր, անգին զինուորներ ժողովուրդը կը հալածէին։ Մասնաւոր արտակտոր զէպքեր բազմութիւն էին, որոց մի քանիսն ակամա տես լինելով նկարագրեմ տատ շինգ զինուոր կողմնակի փողոցին մէջ երիտասարդ հայ մը՝ կը հալածէին սուրինահարելով գայն և երբեմն գնտակներ կարճակէին։ Կորիճ և ճարպիկ երիտասարդը օժտաւորոյտ փողոցների մէջ փախչելով երբեմն յետ կը դառնար և ընկճելներով կրակ կընէր իւր հալածողների վրայ։ Միգին փանեցի Մանուկը իւր տորճանակի գնտակներ հառցուցած՝ ձեռքի գաւառանով (տորոփա) տասնի չափ զինքը չըջապատող զօրքերի զէմ կը կուէր, մէկին ճակատը խորտակելով ու միւսին աչքերը թափելով։ Մօտ 5. 10 փայրկեան գիմացաւ քաջն Մանուկ այս անհատաւոր կուտն մէջ և միաժամանակ իւր կուրծքն ու կողերն մղկած սուրբների մէջ ահաւոր ճիշ մ'որճակելով շնչապաշտ

գե.սին զըրբկեցաւ: Վարը՝ գէպի կայսրան գացող ճանրան վերայ մէկ քանի քայլ աննկով, գե.սին զըրբկեցաւ հսկայ ֆոփաննէսը, կուրծքին վրայ սալինի և պարտին վրայ հրացանի գնտակ մ'ունենալով: Կազարէթի մասը չկարտ. զացայ տեսնել. իսկ զիսկը կառքը զնկու միջոցին տեսայ որ սալինեիով բազում տեղեր ծակոտած էր: Այստեղ չմտածամ ասել որ բոլոր հայ մետածները և վերաորեալք կառքի մէջ գնելով՝ անաջինները ի պալատ և երկրորդք Սպարապետի դռան զինուորական հրահրանոցը փոխալ գրեցին: Թիւրք սպաննեալք, որոց թիւը կառավարութիւնը ամենայն զգուշութեամբ կը պահէ, հայթիւրէն անհամեմատ աւելի կը հաշտին, որոնք ևս փոխադրուեցան սպարապետի գաւառ. բազմաթիւ հայ վերաորեալք կան: Կայսր տեղւոյն վրայ հայերէն անմիջապէս ընկողներն վերայիւնալ երեք զոհերն են: Զորքը հայ մ'ալ կայ սպաննած՝ խոր. բէրցի լրանա Կարապետը, որ ամենայն հաշտին անցու. նկով հայերի մէջ չեմ հաւանել: Տեսնողներ եղան, որ հայ վերաորեալք միմեկը ծանր է. անոնցմէ մեծագոյնը ալ կը հաշտին: Կայսր մասնաձեւ հայ կին մը պատշգամբէ կրակ է տրած զինուորներու վրայ և անոնցմէ մէկ տեղի ու տեղի սպանած է: Ասելու հարկ կ'այ միթէ, որ այդ երեւոյթը շատ ուրախալի է և միանգամայն խրախուսա. կան հայ յեղափոխականներուն, որոնց կաշգիւրուն մէջ կին ալ կ'աննեն: Երբ մի քիչ ամբողջ ցրուեցաւ և կարի հետադար տեղեր տարածուեցաւ, սպարիարքը միջոց գտնելով կառքէն իջաւ և սպաստանեցաւ մերձակայ մի յոյնի տանը: Վանեցի Հաճի Արթինը, որ կառքի մէջ ընկերացած էր, չը հեռացաւ պատրիարքէն և նորա հետ միասին յոյնի տանը մտաւ, այն յոսով որ նորէն պա. տրիարքը կը տանին ի պալատ: Այն միջոցին Տէրվիլ փաշան, որ արդէն հասած էր կույնի վայրը, իմանալով պատրիարքի յոյնի տան լինելը, զինուորներով չըմապատ. տած զիսկը գէպի հոն և ներկայանալով պատրիարքին սուլթանի հրամանաւ ասաց նորան. «Կուք, պատրիարք, տեղեկութիւն տնէք անպատճառ այս ցոյցէն. պէտք է մտածանիլ անէք պարագլուխները...» Ի պատասխանի պատրիարքը շտարած էր և չգիտէր ինչ տակ. նոյն պահոյն Հաճի Բարութիւն ձերբակալեցին իրեն ցոյցի պարագլուխ: Տէրվիլ փաշան ներկայացուց պատրիարքին սուլթանի վերջին հետադիւրը, որ հետեւող բազմաթիւ. թիւնը ունէր. «Լսեցի ու ստատիկ բարեկցած եմ. միւս անգամ այսպիսի գէպեր չարտաճին, ապա թէ ոչ Զեղ ու Չեր ժողովները ամբողջովին կը ջախջախեն: տեղեկու. թիւն տուէք թէ ինչու այդ գէպը պատահեցաւ, տեղւոյն մասնակցութիւն ունեցած էք:» Բնականաբար պատրիարքը չէր կարող իսկոյն պատասխանել: Ի քանի ժամ նոյն յոյնի տանը հանգստանալէն յետոյ, երբ փոքրացային մանր հոխները գե.ս հայերի և թիւրքերի մէջ կը շարունակուէին պատրիարքը սուլթանի հրամանաւ տարին ի պալատ. անդ քիչ ժամանակ մնալէն յետոյ, դռքերով տարին ի Մագրի զիւղ և մինչեւ օրս ալ իր տանը կը մնայ և հիւանդ վիճակի մէջ է: Չերակալութիւնը արդէն կուտի ժամէն մինչ այժմ շատ ու շատ են: Կ. Պօլսոյ և զիւղ. բէրց. ամէն կողմերէ մօտաւորապէս 600 ձերբակալու. թիւք եղան, շատերը մի քանի օր բանալ մնալէն յետոյ երախտաւորութեամբ կարճակուէին, որոնց օր մը կրկին ստտիկանաւոր ներկայանալու հրամանով, իսկ մնացուն ձերբակալեցայ մասին կ'իմանաւ թէ բանտին մէջ անխմա. նալի բարբարոսութեանց կը մատնուին, թիւրք ոտտիկան ներ ստտիկանալ և կը նեղեն նոյս և մինչեւ իսկ ձեռքով հոգեարք վիճակի մէջ կը թողուն: Տաճառ և Մամբրէ

փարդապետ ձերբակալելով կայսերական պալատ տար. տեր և քննուէր են ու ապա արձակուէր, իսկ Մամբրէ փարդապետ կրկին ձերբակալելով պալատ տարվեր և անդ բանտարկվեր է: Այս այն փարդապետն է, որ վեր. ջերս Պայագիտի յայտնի գէպերու ժամանակ իրեն զրգուիչ ձերբակալուելով Կարնոյ ճանապարհով Պօլսո գրկուած էր: Թիւրք կառավարութիւնը կատակելով որ այս յեղափոխական շարժման թերեւս հայ մեծատուք մասնակցութիւն ունեցած լինին (°), նոյս ծառաները ու խաչարարները ձերբակալելով խիստ քննութեան են. թարկած է, անոնցմէ ունէր գաղանթք մը լսելու յոսով: Հաճի Արթինը և ուրիշ շատեր որք իբր պարագլուխ, ձերբակալուած են, սպարապետի դռան զինուորական բանտն են փոխադրուած և զինուորական տանի առաջ կը հարցաքննուին: Զրոյց կայ որ անոնք զինուորական գատարանի առաջ պիտի գատուին: Այդ գատարանը անշուշտ լսկ զինուորական տեսակետով պիտի քննէ ամեն ինչ: Հարցաքննութեանց մէջ վանեցի Հաճի Արթին քանիցս յայտարարած է թէ «ոչ մի պատասխան կարող եմ ձեզ տալ. ինձ տարէք սուլթանի առաջ, անդ ամեն ինչ կը յայտնեմ»: Հաճիի հարցաքննութիւնը զինուորական տանի առաջ կը շարունակուի:

Երկու օր առաջ արտայայտ կերպով տեղի ունեցաւ 3 հայ նահատակների թաղման արար հանգիստը: Խուան բազմաթիւն մը խորհրդաւոր լուծեալով զլուինին կա. խառ կը հետեւէր զազաղներուն, որոնք ուսերնուն վրայ ունէին երիտասարդներ: Պալլըբլի գերեզմանատուն մէջ ամփոփուեցան այդ բազմ հայ յեղափոխականների նու. բական ու սուլթաններով ծակծկված մարմինները: Բոլոր ներկաները լուս ու խեղդուկ կերպով կարտ. սուէին: Խոր տրտմութիւն մը համակած էր ամենքը: Մինչդեռ մի և նոյն ժամանակ ստտիկանութիւնը բանտ թեւով ձերբա. կալութիւնը կանէր ապստամբեան այդ անձնուրաց, ետեղւոյն ու անմոռանալի զոհերի գերեզմանի շուրջը:

Քաղաքիս մէջ ընդհանուր տագնապ կը տիրէ. հայոց բոլոր թաղերը, մանաւանդ Գում. Գափուն պաշարման վիճակի մէջ են: Վիւեր ցօրեկ զօնդագոնայ զօրքեր կը պատին փողոցները, ամեն օր նորանոր ձերբակալութիւնք կը լինին և տաներ խաղարկութեանց կենթարկուին: Այս ամենն մեզ կը յիշեցնեն սոս. թիւրքական պատ. բազմէն առաջ Պալկարական յեղափոխութեան ժամանակ Կ. Պօլսոյ մէջ տիրող զրգոս մը. ահն ու տագնապը:

(Անփական թղթակցելոյ)

Կ. Պօլսոյ 23 յուլիս 1890.

Իմ նախկին թղթակցութեամբս գրած էր որ Խորէն պատրիարք իր տանն տեղափոխուեցաւ և Մագր զիւղ. Նոյն օրէն ի վեր անդ է և հիւանդ վիճակի մէջ: Այգային կրկին ժողովները մի քանի անգամ պատրիարքի տունը համախմբվելով, խորհրդակցեցան այն պատասխանին վրայ, որ ինչպէս կը յիշուի սուլթանը հետադար հար. ցուցած ու ծանր պատասխանատուութեան ենթարկած էր պատրիարքին ու ժողովներն: Այս այս բառական խորհրդակցութենէ յետոյ Խորէն պատրիարք խմբագրել տուաւ սուլթանի ներկայացնելիք իւր հրաժարականը: Զիրաւի անուպատելի էր պատրիարքէն այդպիսի պատճա. արանեալ հրաժարագիր մը, որի զլխաւոր կէտերն հետեւեալներն են. «Ինչ ընէ իսկզճ հայ ժողովարարք երբ կը տեսնէ իւր տուն կողոպտուած, կ'ինկն ու հարսներն

լիկում, տեղւոյս պանդուխտ ազգայնաց ուղղումն նա-
մակներն փոստատան մէջ բացում, իւր նիւթական
պարէնէն զրկում և այլն բազում թշուառութեանց
մասնում: Հայ գաղատացին այլ չ'ը կարողացաւ տոկաւ
և ծայրայեղութեան դիմելով՝ ցոյց արտւ, որ ես ձեզ
խօսեմ ֆանիցս ու քանիցս յայտնած (°) ևս այս ամենը
և անհետանք մնացած է: Ուստի ալ չ'ը կարողանալով
տոկաւ և չուզելով իմ սիրելի Ազգին թշուառութեանց
պատճառ լինել, կուգամ իմ ներկայ հրաժարագիրս
մատուցանել յոսս կայսերական զաւոյնից: Իր այդ
հրաժարագրին մի օրինակը ևս ազգային ժողովոյ ուղղած
է: Պատրիարքարանի գործակատար Ֆռնկեան Արքայապետ
էֆէնդին պատրիարքի հրաժարագիրը, անցեալ ուրբաթ
առաւօտ տարաւ մեծ կաթրոս Բեամիլ փառային բնա-
կարանն՝ առ ի մատուցումն սուլթանի: Տեսնեք ի՞նչ
պէտք է պատասխանէ սուլթանը և ազգ. ժողովը, պիտի
ընդունեն այն թէ չէ: Ամեն պարագայի մէջ չը կարծուի
որ Աւլզեան կրկին յանգղնութիւն ունենայ բազմիկ
պատրիարքական աթոռին վրայ: Ազգային ժողով հրա-
ւերում է գումարուել յառաջիկայ ուրբաթ օրն: Արգիւթ
պիտի կրնայ մի օր և է որոշման յանգել, թէ չէ իր
ամենամանակի տալսական և իմաստակ վիճարանու-
թեամբ պիտի փակէ ժողովը: Իսկ խառն ժողովը գու-
մարվեցաւ երեկ Մարր զիւղ պատրիարքի տանը մէջ.
այդ ժողովին հրաւիրում էր նաեւ Արքայապետը
նորոյ իւթիւնեան Գէորգ վարդապետ, որը այս կիրակի
մայրաքաղաքս հասաւ Տրապիզոնէն, չը կարողացայ հաւ-
տառ աղբիւրէ իմանայ թէ ի՞նչպէս խօսուած են անդ,
սակայն կերեւի որ Արքայ զէպէին աթիւ խառն ժողո-
վը ուղած է բերանացի բացատրութիւններն ընել
իւթիւնեան վարդապետէն:

Թիւրք կառավարութիւնը սկսած է փախենալ Հայերէն.
արդէն Յուլիսի 15 ի Հայ յեղափոխական այդ նշանաւոր
օրէն ի վեր թիւրք ստտիկանութիւնը ամբողջովին ոտի
վրայ ըլլալով հանդերձ բազմութիւն զինուորներ ամեն օր
գիշեր ցերեկ կը շրջեն Գում. Գափուի թաղերի մէջ:
Այս կիրակի՝ այսինքն Յոյցի յաջորդ կիրակին
թիւրք կառավարութիւնը փախենալով որ չը լինի թէ
կրկին այնպիսի արիւնահեղ ցոյցեր տեղի ունենան,
արդէն յայտնի զինուորների վերայ գիշերանց գունդապետի
զօրքեր հասցայի ի Գում. Գափու: Այնպէս փկայ մը
կատրով մի բարձրատիւնեան փառային հանելը և այլ և
այլ հրամանները կը տեսնէ. նոյն կիրակին արդէն կատա-
վարութենէն հրաման եկած էր Գում. Գափուի և Վա-
րաթիայի եկեղեցիներուն որ ամենօրեան ժամանակէն
չառ յառաջ արարողութիւնը վերջացնեն, ինչպէս որ եղաւ
առ Սամաթիայի եկեղեցիին մէջ և բազմ բազմաթիւ
քաղաքի ոտտիկանք և զինուորներ ճամբիս պահակատան
վերածած էին, մինչև որ նոյն եկեղեցոյն թաղական
խորհրդէն մի անձ, սաստիկ բարկացած՝ զօրքերի պէտե-
րուն դիմելով, «Ձեր այդ ընթացքը սաստիկ կը հակա-
ռակեցնէ ժողովուրդը: Դիտցած ըլլաք որ այդպէս մի
քիչ ևս շարունակելու լինիք պատճառ պիտի լինիք մի
երկրորդ կոտորածի, ուստի կը խնդրեմ ձեզնէ որ փոխա-
նակ եկեղեցիին մէջ գործերն երթաք և անդ սպասէք»:
Ի ըստ այս յայտարարութեան զինուորներն հեռացան
եկեղեցիէն: Միւս կողմէ Վալարթիսի եկեղեցին ևս
Գում. Գափուի եկեղեցոյն նման արարողութիւններն
կանոնաւ վերջացուցած և դռներն փակած էր: Բազմաթիւ
քաղաքի ոտտիկաններ նոյն կիրակին Հայերի ամեն
շրջաններու մէջ շրջելով շատ ու շատ ձերբակալու-

թիւներ ըրած են: Հայերի և ձերբակալները փրա-
կուած խտտութիւնք ամեն ժամանակ տակի ու տակի են
ձանապարհական անցողիք ունեցող Հայք, որը կուգէ
ձանապարհորդել իւր գործերի համար այլ և այլ քաղաք-
ներ, իսկոյն և եթ կարգիլուէ նորա մեկնումը: Արտուի
թէ բարձրագոյն հրամանաւ արգելաւ է Հայերին
Պոլսից գորս երեկ գէթ առ ժամանակ վերջապէս,
ինչպէս ըսի, թուրք կառավարութեան վայրենական
խտտութիւնք Հայերի վերայ չափից գորս են, այնպէս
որ տեղւոյս եւրոպական դեսպանք ի նկատի ունենալով
Հայերի վերայ եղած այդօրինակ վարմունքն, վերջերս
խորհուրդ տուած են Բ. Գում. վերջին Հայերի վերայ
եղած խտտութիւններն, որոնք ոչ մի օգուտ չեն կարող
ունենալ և որոնք տակի ու տակի կը գոյցացնեն Հայերին
նորանոր ցոյցերով կառավարութեան գիմարներու, որ
չառ փոստագատար կրնայ լինել Թիւրքիային համար:

Վերջին յուրերէն կիմացուի թէ սուլթանը չէ ընդունած
Աւլզեան պատրիարքի հրաժարականը և մինչև իսկ
ստիպած է որ կրկին շարունակէ բազմիկ պատրիարքական
աթոռին վերայ: Հնայելով սրան, պատրիարքը մինչև օրս
ալ իւր Մարրգիւղի ամառանոցին մէջ կը բնակի, հաւ-
տառապէս որոշած լինելով այլ ևս չը շարունակել
պատրիարքական պաշտօնը: Արդէն ով որ ալ պատրիարք
ըլլայ, ազոնք չեն Հայի վերջին գարման անոցը, այլ 15
Յուլիսի նման չարժամները:

15 Յուլիսի Յոյցէն յիսոյ այստեղի յոյներն ալ զրգը-
ված են և իրենք իրենցմէ կը հարցնեն թէ միթէ իրենք
Հայէն պակաս են, որ չեն երէր նոյնպիսի ցոյցերով
կառավարութեան գէտ:

Սուլթանը և Բ. Գում. բանձրաստիճան Հայերէն խտտի-
հարցումներ են արած և տեղեկութիւններ պահանջած
Հնչակեան Կոստակցութեան մասին:

ՆԱԽԱԿ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ. (Սեփական թղթակցից)

7 յուլիս 1890.

Կատարած կը գրեմ նամակս Կոտորած, սոսկալի կատ-
րած ամեն կողմ, ամեն օր նորանոր կողմեր, կոտորածի
լուրեր կը հասնին: Մասնաւոր նպատկութիւններ ընդհանուր
են արդէն: Յուզում ու զրգում ամեն կողմ տարածուած է:
Կառավարութիւնը խելքը կորսնցուցած, կատարած ամեն
կողմ հրամաններ կարճակէ Հայերին ամեն մի շարժում
գիտնելով ծայրէն տեղիտեղի: Երգեկայ ամբողջ
բանակը շարժման մէջ է, մեր երկրի ամեն կողմ գինու-
րներով կը լեցուին: Փոքր Ասիայէն — Խարբիդէն, Սե-
բաստիայէն գինուորներ կը գան Կարնոյ և Վանայ կողմերն:
Պահեստի (բէտիֆ) զօրքերը ի զէն կը կոչուին Հայերը
կոտորելու համար: Մեր քաղաքի և ուրիշ տեղերու
տաճիկ մօլանները կառավարութեան հրամանով մոլեռան-
դութիւն կը քարոզեն միւսլման ժողովրդին գէտի բրիւ-
տոնեաները, և վրէժխնդրութիւն (°) կը զրգուն-
մելուանդ ժողովուրդը և բարբարոս կառավարութիւնը
միացած մեր արեան վերջին կաթիլը խմել կուզեն:

Կարնոյ մէջ կրկնուող կոտորածները արժանաւոր գտան
Վանայ կողմերը: Ահեղի կոտորած տեղի ունեցաւ Վանայ
մօտերը մեռածները և վերաւորները բազմաթիւ են: Ժո-
ղովուրդը գիմարած է. այլ ևս ժողովուրդը ոչխարի պէս
վրգը չերկնցներ և ինքիները պաշտպանելու կը դիմէ:

Մուշի մէջ եղած կոտորածները վտանգ առկա չեն թէրճանէն ալ կոտորածէ լուրեր, Բասէնէն ալ բազմաթիւ սպանութիւններու յոր հասաւ տեղս երէկ. բայց ամէն կողմանէ ալ ժողովուրդին գիմաղրութեան լուրը եւ հետը կը հասնի ժողովուրդը իմըղինքը գետնաշարժէ զոչացող եւ պատառ պատառ եղած գետնի վրայ կըզայ. մահը ամեն րոպէ աչքին տառն է, կողմէ օր տառն մեռնել եւ ազատել այս վիճակէն: Աւ յիշել չեմ ուզեր Արճէի մօտերը երեք մեկի ճանապարհորդ գաղանարար կոտոր ընելին: Ամէն կողմ գաղտերի մէջ, ճանապարհների վրայ պատահողներն գետակահար գետին կը փռուին: Սերատուից չըջակայքը Այա. Քիլիսայի մէջ հարկի համար չորս գիւղացիների ողջ ողջ սղլիւն հարկահաններին կողմէն ընդհանուր կատաղութեան պատճառ եղաւ:

Յուզում ե յուսահատութիւնը ընդհանուր են: Հայ գիւղացին, որ արդէն անխղճ փոխառուների, անիրաւ հարկահանների եւ անգութ թիւրք պաշտօնեաների լուծին տակ շնչապառ ընկած էր մահամերձ, այս քաղաքական բռնութեանց եւ կոտորածներու գիմաղրելու պահանջն զգաց եւ սկսաւ մտածել կամ մեռնելու եւ կամ ազատ սպրիւտ մտնել, քան համոզված լինելով որ այս գրութեամբ թէ տնտեսականապէս եւ թէ քաղաքականապէս իսպառ կորած է: Ազոր ապացոյց կարող է լինել այն ոգևորութիւնը որ կերել էր ժողովուրդին վրայ երբ անցնալ օր յոր տարածուեցաւ թէ, չգիտեմ որչափ սոսոյզ, Զէյթունի մէջ ապստամբական շարժումներ սկսեալ են: Կոնստանտնուպոլսէ եւ մինչեւ իսկ ուրախութեան ճիչեր արձակեց երբ քաղաքին մէջ լսուեցաւ համրածածնօթ Մուսայ պէյի ամբողջ ազարակին հայերու կողմէ կրակի արտօնը: Հայ ժողովուրդը ամէն կողմ յուսահատ գրութեան մէջ պատ. բառս է իր արինքը թափելու եւ այլ եւս մեռնելի չլինալ. նոր հաւանաւ իր եղբոր ստիճով պատուով կործքը եւ լսեց իւր քոյրերուն վիճման երկունքներու սրտակտոր ազազակներն: Կորստ ուզողը արեան գոթը լինելով բորոք. քած է այլ եւս: Հիմա տենդային կացութեան մէջ է ոչ միայն Հայ ժողովուրդը, այլ ամբողջ Հայաստանի ազգա. բնակչութիւնը: Քիւրդ ցեղերէն ոմանք թիւրք կառավա. րութեանէն կաշտոված՝ հայերը կը կոտորուեն, ոմանք հանգամանքներէն օգուտ քաղել ուզելով պարսից սահմանի վրայ յարձակելով կաւարեն ու կը կոտորուեն, ոմանք ալ իւրեանց ցեղական նախկին վրէժխնդրական հաշիւները տեսնելու հետ են. գրաւը կը կոտորեն, հայի գիւղեր եւ տուններ իրենց կոտորի գաւառ ընտրելով: Ոմանք ալ մեր ստած ըստոյզ տեղեկութեանց նայելով թիւրք կառավա. րիչներու վրայ կը յարձակին ու գայն կը նեղեն զանազան կողմերէ: Տէրսմի Հիւսէյին պէկի եղբայր Թեմուր պէյ Ղուցիխանի կայսերական ազահանքերուն վրայ յարձակել է ու պատրաստ գտնուած աղը բոլորը գրաւել է, թէպէտեւ Երզնկայէն նորա վրայ քսան եւ հինգ ճիւղեր գինւորներ խրկուել են իւր թէ ձերբակալելու եւ պատ. ձեռն, սակայն նորա Հիւսէյին պէկի շուքէն անգամ վախճարով, անշուշտ ձեռնուռայն եւս պիտի գտնան: Գանկոյի տոյս Եւստֆ պէյ ալ Կոզաթի կառավարչին (Բաղիչի կուսակալութեան) վրայ յարձակելով, կը վռնուէ զայն կառավարչական պալատէն, յայտարարելով թէ՝ ալ ոչ քեզի, ոչ վալիին եւ ոչ ալ սուլթանն կը ճանչնան Յուզումը, խառնակութիւնը ընդհանուր է. անխիստութիւն է ամէն կողմ. կառայարանութիւնը եւ բուռն ոյժն է որ կը տիրէ ամեն տեւ. մեծամեծ զէպքեր տեղի կունենան եւ պիտի ունենան այս երկրի մէջ: Հայ ժողովրդի ապագայն վճռվելու վրայ է:

Հայ ժողովուրդը իր անստոյգ վիճակէն ազատվելու եւ իւր ապագայի համար պատրաստ է ամէն բան ընելու, ամէն բան զոհելու, միայն անձնազոհ առաջնորդներու պէտք ունի, որ զինք առաջնորդեն ազիզ ճանքով: Հայ ժողովուրդը երկունքի մէջ է, ով ինչ որ կրնայ ընել թող ընէ. ժամանակը հասած է:

Z.

ՆԱԽԱԿ ՏՐԱՊԵՉՈՒՅՑ (Սեփական թղթակցից)

27 յուլիս 1890.

Ներկայիս կը փութամ հաղորդել մի յոյժ ծանրակիւ պարագայ, ուսկից պարզ կը տեսնուի թէ օտմանցի մօն. զօլը ուրե լինի Հայաստանի մէջ թէ Եւրոպայի դուռը, երկայն եւ լայն կանաչ փաթթոցով եւ լայն շալվարով թէ Եւրոպական նեղ պաշտաւ օճիւմ — մի եւ նոյն բարբարոս, կրօնամոլ ֆանատիկն է, ինչ որ զարեւ տառն. թէ ներկայ աչքեր յայնայ յատուորութեան դարը որ այնքան քաղաքակրթող դեր կը կատարէ միևնոյն երկրի մէջ բնակող գրայի քրիստոնէայ փոքրիկ ազգերու մէջ, զեւ ոչ մի ազգեցութիւն չէ յաջողած կատարել տաճիկ ազգի վերայ, որ ամենայն հատաստութեամբ զեւ եւս վառ կը պահէ իւր երակներուն մէջ իւր վայրենի նախնեաց զագանական բնազդները: Այդ է պատճառը որ տառն յին յարմար ստիժը ներկայացած պարագային, ստանց ի հաշիւ առնելու ծագելիք հետեւներն, անմիջա. պէս կը զիմէ իւր սիրելի, փափաքելի իղէալին — կոտ. րած գեափոքներու . . .

Կարնոյ յայտնի գէպքէն յետոյ առհասարակ դայրոյթ ծագեցաւ տաճիկաց մէջ ընդդէմ՝ քրիստոնէաներու, մաս. նաւորապէս, ի հարկէ, հայոց: Տրապիզոնի թիւրք հասա. րակութիւնն եւս անհաղորդ չմնաց այդ ընդհանուր զայրոյթին, չնայելով որ այս քաղաքի հայեր գրեւն խոհեմութեամբ վարուի նոցա հետ Գանիցս յուեկաւ թէ թիւրքեր մտաղիւր են յանկաւորատուից կոտորել, ջարդել գիւղերայն լոյսը հայերը: Մի քանի անգուսպ երկատարող թիւրքեր այն ատիճան յատաճ գնացին, որ բացարձակ կը խոտէին հայերու ստաճ, որք կարեւորութիւն չէին տար ամենին, համարելով դայն իբր մեծախոտ. թիւն կամ մի սպառնալիք: Սակայն Ա. Պօլսոյ մէջ տեղի ունեցած նշանաւոր Կոյսէն յետոյ, երեկ, աւելի եւս կատաղելով, կը փորձեն իրագործելու իրենց ցանկութիւնը որ եթէ յաջողած լինէր՝ այսօր տնչուա Տրապիզոնի հայոց թաղը աղետալի տեսարան մը պիտի ներկայացնէր: Երեկ, ուրբաթ գիւր, լոյս շարաթ, քաղաքիս արեւելեան մասի Սօթղա, Բալլէ եւ Հաճի. Բէշիր թաղերէն խումը խումը տաճիկներ կը համախմբուին Քաղաք Մէյդանի ըստած ընդարձակ հրապարակը, ամենքն եւս սպառնալի. նալ յարձակելու համար յանկարծակի՝ քաղաքի արեւելեան մասի վերայ, ուր կը գտնուին առհասարակ հայոց թաղեր խիա՝ միմեանց մօտ Սյոյ մօլի, խուժամած ամբոխի մէջ տեսնուած են մինչեւ անգամ թրքոհինքը՝ զինուած տապաւներով եւ ատրճանակներով, երեկ ջար. գելու իրենց համառեւ հայուհիները: Տաճիկ ամբոխի թիւը մօտաւորապէս 2000 է եղել: Սոցա գէպ ի. քաղաքի կեդրոնը յառաջացած պահուն՝ կրմանայ տաճիկ երեկելի, հարուստ եւ ազգեցիկ քաղաքացիներէն մին Փէրթէվ անուամբ, ջնորհիւ դարձեալ մի ուրիշ տաճիկ Սա անմի. ջապէս կը փութայ իմացնել կառավարութեան, որ իւր կողմանէ իր սեփական վտանգի ստաճն ուլ առնելու համար զօրք կը հաստատէ Զգանոս ըստած կամուրջին

գլխիսը և կարգիլէ կատարի հոսանքին յառաջնորդացութիւնը: Վերջիցեայ Փէրթէլէ Էֆ. իր լուրս ազգեցութիւնը ի գործ գնելով՝ կը յաջողի կտակները ամբողջովն պարտ գլխիսը և այսպէս առ օր և է ազեալի հետեւնքի մը հասնելու՝ զի ցրուէ: Այս յառանգութէ՝ Տրապիզոնցի հայը այնքան խելացի կը լինի որ իր յիշողութենէ չհանելով վերջին պատերազմի թւին զգացած երկիւղը, և այս ահալի փորձը, կշտապէ զենք ձեռք բերելու ի պաշտպանութիւն իր և ընտանեակի կեանքին ու ստացածոց: Կատարարութիւնը տաճիկներէն ձերբակալութեան ոչ մի շարժում չընէր, մինչդեռ միւս կողմէ ամեն օր յիս կը գարձնէին Կիւմուշտանէն անմեղ հայ ճանապարհորդներ, որք առկէ յը մեկնին գէտի Կարին և Հայաստան:

Հայաստանցի .

Տ Ա Ս Ն Ե Ի Հ Ի Ն Պ Ի Յ Ո Ի Լ Ի Ս Ի Ն .

Վերքի գետնորոշման իրրե հայկական յեղափոխութեան նշանաւոր գոհումնաւ «Մեր պաշտօնը» վերնադրով գրութիւնը, որ 15 Յուլիանի Պատմ. Պատմութի մայր եկեղեցում սկսաւ կարդալ ցոյց անուրեւից մէկը: Այդ գրութեան ընթերցումն անհնարին եղաւ աւարտել այն մեծ իրարանցման շարժով, որ առաջացաւ եկեղեցում՝ հէնց նրա տաճիկն առերից:*)

Մ Ե Ր Պ Ս Հ Ա Ն Ձ Ը .

«Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր .

«Ներկար առթիւնքէ ի վեր տեսնելով որ Հայաստանի մէջ միշտ անպակաս են անտեղի ձերբակալումներ, յաշիրաւի վճիռներ, անգութ արարանք: Տեսնելով որ փոխան ժողովրդեան մեծ համբերութեան՝ տարուէ տարի այսպիսի գէտքեր կրողներու անտեղի կերպերով, մանաւանդ վերջին տարիներս՝ զպրոցք, վանք, եկեղեցիք, տներ անընդհատ կ'սուզարկուին. և ահա Կարնայ մէջ ևս նոյնպիսի խուճարկութիւնք կատարվելով՝ ժողովրդեան արդար բողբոսն վրայ՝ ոչխարի պէս ստիպահար անխնայ կ'ջարդուին. այս՝ կ'ջարդուի անմեղ և անզէն ժողովուրդը կատարի զօրաց կողմանէ: Տեսնելով որ բազմաթիւ հայ գիտնիկներ և հարիւրաւոր, հաղարտուր վերադարձաց և վիճող մեր քերք ու մարց աղաղակներն երբէք ոչ ազգայնութեան չեն առնուիր և այսպիսի գէտքեր վանայ, Մշտ և այլն գաւառաց մէջ ամեն օր կ'երկնուին, մինչև իսկ հայաց աներէն հայ կարելու գանակներ կ'աղաղուին և ընդհանրապէս թրքաց ու քրդաց զենքեր կ'աղաղուին: Տեսնելով վերջապէս որ մեր մայր երկիրը խիստ պաշարման մէջ կ'գտնուի և այսպիսով հայ ժողովրդեան մէջ մի շարժում կատարածանայ կենթարկուի . —

«Մերք համայն հայ ժողովրդին անունով այսօր

*) Տարանջական անուշադրութեան պատճառով այս գոհումնաւ փոխարէն առաջին («Հայ ժողովրդի Պաշտօնը» ներք») գոհումնաւին կ'ից գետնեղաւ, պարտաւորվեցանք այստեղ տառնալի գետնեղաւ:

Թ . Հ . Խ .

կ'յայտարարենք ի լուր ամենեցուն, որ այն կայսրութեան շարունակութեամբ՝ կենաց, պատուի և ընդից տարահալութիւն ունենայ անկարելի է, և միանգամայն Չերդ Սրբազնութիւն և ազգային վարչութիւնք անապրեք, առկի ճիշտ՝ անկարող կ'գանուիր անմիջական գարման մը հասնելու: Հետեւաւոր կ'աշտանջեմք, որ զմեզ առաջնորդէր կատարարութեան, որպէս զի անձամբ յայտնենք իրեն հայ ժողովրդի վիճակը և պաշտանջերը:»

Թ Ի Ի Ր Ք Զ Ի Ն Ի Ո Ր Ս Կ Ա Ն Ս Տ Ե Ա Ն Ի

Կ Ա Տ Ա Վ Ժ Ի Ո Ր

Հետադիւրը վերջերս հաղորդեց, որ թիւ ք գնաւորական տեսանք յայտնի Հ ա ճ Ի Յ ա Ր Ս Ե Թ Ի Ն Ձ հ ա Ն Կ Ի Ե Լ Ե ա Ն Ի Ն գաւառաբարեղ է մ'ա հ վ ա Ն ա լ ա լ թ ի, պատճառաբանելով թէ՝ իր պատրիարքարանում գտնված սուրբ անի պատկերն ու թաղարան պատարու, ջարդաց ու տանակոխ անողը նա կ'ընէ լինի: Այդ գաւառիցիւր իրր Բ . Վաղը վաւերացնելով, ներկայացրել է սուրբ անի կ'ի թէ՝ այդպիսի գաւառիցի լուրը ստուգվէ և սուրբ անի էլ նրան վաւերացնէ իր կողմից, այն ժամանակ թուր Մեծ Տաճիկն ու իր աւագակ կատարարութիւնն իմանաւ, որ իրենց այդ բացայայտ գաճական քայլը երբէք անվրէժ չի անցնիր:

Այն ներքական տեսանք, գարձեալ հետադրի տաւթեամբ, իրրե քաղաքական յանցաւոր ձերբակալման հայերից երկուսին իրր գաւառաբարեղ է տառնի հինգ տարի տաճանակիր աշխատանքի և մնացեալ շատերին 6 — 13 տարի նոյն պատիւ:

— Իրրե պաշտօնական օրդան Հնչակեան Կուսակցութեան, յատուկ պատուէրի համեմատ՝ մենք յայտարարում ենք, որ Կուսակցութեան Պաշտօնաւորում իր ժամանակին առաջվեցան Ը . Ը . Ը . 70 օտմանեան լիւրա և Մ . Վ . Ի միջոցով 20 օտմանեան լիւրա:

— Հնչակեան Կուսակցութեան կողմից առանձին թերթերով բացված է գրամական Հ ա Ն Կ ա Ն ա Կ Ե Լ Ե ա Ն Ի Ն նպատակ յեղափոխական գործերի և Կարնի ու Կ . Պօլի գէտքերում վնասաւորներին Հ ա Ն Կ ա Ն ա Կ Ե Լ Ե ա Ն Ի Ն թերթերի վրայ գրված է Կուսակցութեան պաշտօնական կնիքը: Հանգանակված գաւառներին հաշիւը կ'գետնեղվէ «Հնչակում»:

— «Հնչակի» հետեւեալ համարը լոյս կ'տեսնէ մի շաբաթից յետոյ:

Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետեւեալ հասցեով.

Montpellier (France). — M. Beniard. Poste Restante (Nr 25)

Իսկ գրամ ուղարկել.

Bale (Suisse). — M. Daniel. Poste Restante .

Լոնդոն . Հայկական ազատ տարան .